ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հունիսի 6-ից 9-ը շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանին Տաջիկստանի Հանրապետություն (քաղաք Դուշանբե) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Գայանե Գաբրիելյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**
   Դուշանբե (Տաջիկստանի Հանրապետություն)
   2022թ. հունիսի 6-ից հունիսի 9-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Տաջիկստանի Հանրապետության կառավարություն
   Միավորված ազգերի կազմակերպություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն «Ջուրը հանուն կայուն զարգացման» 2018-2028 թթ. գործողությունների միջազգային տասնամյակի երկրորդ բարձր մակարդակի միջազգային համաժողովին՝ «Ջրային գործողությունների և գործընկերության խթանում տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում» թեմայով

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Համաժողովի ընթացքում քննարկվել են՝

- Տաջիկստանի կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության կողմից համատեղ կազմակերպված Դուշանբեի ջրային գործողությունների տասնամյակի առաջին համաժողովի Եզրափակիչ հռչակագրում, համանախագահների ամփոփագրում և Գործողությունների ձեռնարկման կոչում նշված գործողությունների վերաբերյալ թարմացված տեղեկատվության տրամադրմանն ուղղված հարցեր,
- ջրի հետ կապված միջազգայնորեն համաձայնեցված նպատակների և թիրախների իրականացման ուղղությամբ հարցեր՝ տարածաշրջանային և ազգային մակարդակով, մասնավորապես ԿԶՆ 6-րդ կետի շրջանակներում,

- գիտության վրա հիմնված լուծումների և գործիքների խթանման ուղղությամբ հարցեր, ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարությունների,
- լավագույն փորձի փոխանակումը կարողությունների, գիտելիքների, կրթության բարելավման և երիտասարդների ակտիվ ներգրավածությունը ջրային ոլորտի հարցերում,
- տարբեր մակարդակներում համագործակցության ամրապնդման ուղղությամբ հարցեր՝ խթանելով երկխոսությունը, գործընկերությունը և միջոլորտային մոտեցումները:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

1. Անդրադարձ է կատարվել անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարման հարցին, և ամբողջ աշխարհից համաժողովին մասնակից գործընկերներին է ներկայացվել ջրային ոլորտում համագործակցության հայ-իրանական հաջողված փորձը, երբ երկու հարևան երկրներ կարող են փոխշահավետ համագործակցել որևէ ոլորտում և համակարգված, համաձայնեցված օրակարգով լուծել առաջացած խնդիրները:

Սույն թվականի մայիսի 11-ին ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի և ԻԻՀ էներգետիկայի նախարար Ալի Աքբար Մեհրաբիանի համանախագահությամբ միջկառավարական համատեղ հանձնաժողովի 17-րդ նիստի արդյունքում ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որով արձանագրվել է շրջակա միջավայրի, առևտրի, արդյունաբերության, առողջապահության, կրթության, մշակույթի, զբոսաշրջության, գյուղատնտեսության և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցությունը զարգացնելու երկկողմ պատրաստակամությունը:

2.«Ջուրը հանուն կայուն զարգացման» 2018-2028 թթ. գործողությունների միջազգային տասնամյակի երկրորդ բարձր մակարդակի միջազգային համաժողովին ներկայացվել է ելույթ, որի ընթացքում անդրադարձ է կատարվել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև տվյալների ստեղծման և մշակման Հայաստանի Հանրապետության փորձով կիսվելու հնարավորությանը:

3. Անդրադարձ է կատարվել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի գործունեությանը, որին վստահված է մեր երկրում խմելու ջրի արտադրության և բաշխման, կեղտաջրերի մաքրման օբյեկտների կառավարման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում խմելու ջրի ցանցի մշակման ու բարելավման գործառույթը: Այս գործընթացում կառավարությունն իր դերակատարումն ունի երկու առանցքային մեխանիզմների միջոցով՝ կարգավորման և թույլտվությունների տրամադրման: Ինչ վերաբերում է թույլտվության մեխանիզմներին, ապա Շրջակա միջավայրի նախարարությունն է պատասխանատու ջրօգտագործման և ջրահեռացման թույլտվությունների տրամադրման համար, որոնք հանդիսանում են ջրային ռեսուրսների

կառավարման և բաշխման, երկրում ջրի աղտոտվածությունը վերահսկելու առանցքային գործիքներից մեկը: Թեև Հայաստանի Հանրապետությունում ջրօգտագործման թույլտվությունների համակարգի բարելավված ներդրումը դեռևս սահմանափակված է որոշակի թերություններով, ներկայումս ակտիվորեն աշխատանք է տարվում թույլտվության ընթացակարգերի կատարելագործման ուղղությամբ, այդ թվում՝ խոշոր ջրօգտագործողների և ջրահեռացման համար, որպեսզի միաժամանակ ուժեղացնենք թույլտվության գործընթացը:

Անդրադարձ է կատարվել նաև տվյալների ստեղծման և մշակման գործընթացին. կարևոր է տվյալների ստեղծումը և մշակումը, ինչպես նաև համոզված լինելը, որ ջրի հետ կապված հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս շահառուների կողմից օգտագործվում է տվյալների նույն փաթեթը:

Հայաստանի Հանրապետությունում վերջին 2 տասնամյակների ընթացքում ջրային ոլորտում իրականացված իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին զուգահեռ, մշակվել է ջրային պետական կադաստրը (ՋՊԿ), որը Հայաստանում Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման գործընթացի ներդրման կարևորագույն օժանդակ գործիքներից է:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել, սակայն Տաջիկստանի բնապահպանական կոմիտեի հետ եղել է պայմանավորվածություն ավելի արդյունավետ դարձնելու երկու երկրների միջև բնապահպանական գերատեսչությունների համագործակցությունը և կնքել փոխըմբռնման հուշագիր:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել «Տնտեսական համագործակցության և զարգացման» կազմակերպության հետ ջրային ոլորտում հնարավոր համագործակցության շուրջ և առաջարկվել է մասնակցել ս.թ. հունիսի 22-ին Երևանում կայանալիք դոնորների համակարգման հանդիպմանը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Համաշխարհային բանկի հետ ամրապնդել ջրային հաշիվների հետ կապված բարեփոխումները:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համաժողովի ընթացքում ողջունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակումը, ինչի ընդունումը հետամուտ է ջրային ռեսուրսների

կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծման միջոցով ազգային ջրային պաշարի պահպանմանը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով անհրաժեշտ քանակի և որակի ջրով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարմանը, մակերևութային և ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի վատթարացման կանխմանը, խիստ փոփոխված ջրային մարմինների կարգավիճակի բարելավմանն ու վերականգնմանը, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովմանն, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովմանը:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Գայանե Գաբրիելյան
14.06.2022թ.